

Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2016 թվականի 2-րդ կիսամյակի

ՀԱՇՎ ԵՑՎՈՒԹ ՅՈՒՆ

9. Ալաշկերտ

23.01.2017թ.

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա երկրորդ կիսամյակը բարենպաստ էր գյուղատնտեսության համար: 2016 թվականի երկրորդ կիսամյակում հավաքագրվել է 1953752 դրամ հողի հարկ և 4627352 դրամ գույքահարկ:

Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ.

1. Կենտրոնական ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին,

կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման

աշխատանքներ:

Մանկու ջրի խողովակաշարը կառուցվել է 50-60-ական թվականներին, որը ունի

վերանորոգման խիստ կարիք: Համայնքում հատված-հատված կատարվել են

վերանորոգման աշխատանքներ: Բնակչությանը անվճար և անխափան տրվում է

խմելու ջուր՝ օրական 4-6 ժամ տևողությամբ:

3. Համայնքում պարբերաբար կատարվում է անվճար աղբաթափման աշխատանքներ

/շաբաթը մեկ անգամ/: Գյուղի տանիտարական վիճակը գտնվում է

բարվոք վիճակում:

4. Համայնքի կենտրոնական փողոցներում և գերեզմանատանը անցկացվել է

թերեկային լուսավորում:

Շինված կացվել է 6 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղղվել են

արգելափակման, իսկ բյուջեում կատարված փոփոխությունները՝ հաստատված բյուջեն,

հղարկվել է Արդարատության նախարարություն՝ փորձագիտական քննության:

6. Բնակիչներին տրվել են 400-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի

փաստաթղթերի պատճեններ:

7. Ժամանակին և պատշաճ կերպով գինկոմիսարիատի հետ անցկացրել ենք

գինակոչիկների կցագրման աշխատանքներ:

8. Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ

Ֆինբաժին՝ տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:

Բնակչության անապահով խավերին տրվել է տարբեր չափի ֆինանսական

օգնություններ:

10. Համայնքի մանկապարտեզի կառուցման նպատակով համայնքը որպես

համաֆինանսավորում Համաշխարհային բանկին է փոխանցել 7 մլն դրամ:

Մանկապարտեզի կառուցման աշխատանքները փաստաթղթավորման գործընթացի

մեջ են:

11. Պայմանագիր ունենք միջազգային կազմակերպության հետ և համայնքի


անապահով և նպաստառու բնակիչներին արտահարվում են օգնություններ սննդի

և հագուստի տեսքով:

Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված հիմնախնդիրներ, որոնք բարձրացվեցին համայնքի բնակչության կողմից:

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:
2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:
3. Խիստ անհրաժեշտություն է առաջացել գյուղապետարանի վարչական շենքի կտուրի վերանորոգումը:

Համայնքի ղեկավարի 2016 թվականի երկրորդ կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Մ. Սարիբեկյանը:

Համայնքի ղեկավար  Կ. Հովհաննիսյան